



«ԶՐԱՌ» ՓԲԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ
ԱՆԿԱԽ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՐ**



ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՓԲԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmlc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱՆ ԱՌԴԴՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՋՐԱՌ» ՓԲԸ-ի բաժնետերերին և ղեկավարությանը

ՁԱՍՓՈԽՎԱԾ ԿԱՐԾԻՔ

Մեր կողմից իրականացվել է «ՋՐԱՌ» ՓԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունների աուդիտ, ընդ որում այդ հաշվետվությունները ներառում են 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականությունը:

Մեր կարծիքով բացառությամբ «Կարծիքի ձևափոխման հիմքեր» բաժնում նկարագրված հանգամանքի հնարավոր ազդեցության՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Ընկերության՝ 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ):

ԿԱՐԾԻՔԻ ՁԱՍՓՈԽՄԱՆ ՀԻՄՔԵՐ

- Մենք ընտրվել ենք որպես Ընկերության 2024թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտ իրականացնող 2025թ. մայիսի 5-ին, ուստի հնարավորություն չենք ունեցել մասնակցելու Ընկերության 2024թ. հիմնական միջոցների և պաշարների գույքագրման աշխատանքներին:
- Ընկերության կողմից մեզ չի ներկայացվել Ընկերության հիմնական միջոցների, մասնավորապես ջրամբարների, ջրանցքների, ջրառն իրականացնող և ջուրն ընդունող ջրատնտեսական օբյեկտների սկզբնական արժեքների ձևավորման և հաշվեկշռային արժեքների արժանահավատությունը հիմնավորող փաստաթղթեր: Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 55,384,306 հազար դրամ, իսկ 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 47,937,365 հազար դրամ: Մենք ի վիճակի չենք եղել այլընտրանքային ճանապարհներով ձեռք բերել բավականաչափ և համապատասխան ապացույցներ 2024թ. դեկտեմբերի 31-ի և 2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ այդ հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքների վերաբերյալ: Մեզ չեն տրամադրվել նաև Ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող անշարժ գույքի սեփականության վկայականները:
- Ընկերության հաշվետու տարվա վերջի օրվա դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությամբ արտացոլված է 4,415,078 հազ. դրամ որպես տրված կանխավճարներ հիմնական միջոցների ձեռք բերման գծով: Մենք ի վիճակի չենք եղել ձեռք բերել համապատասխան ապացույցներ նշված դեբիտորական պարտքի մասով: Համաձայն ՀՀ կառավարության 2021թ. հոկտեմբերի 14-ի թիվ 1689-Ա և 2023թ. հուլիսի 27-ի թիվ 1274-Ն որոշումների Ջրային կոմիտեյին հանձնարարված է եղել իրականացնել 12,163,550 հազ. դրամի գույքի ընդունման-հանձնման գործընթացը, սակայն Ընկերությունը 28.02.2024թ. հանձնման-ընդունման ակտով ստացել է միայն 7,748,472 հազ. դրամի գույք, ինչի հետևանքով էլ առաջացել է վերոգրյալ պարտքի մնացորդը:



ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՓԲԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmlc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

- Մենք ի վիճակի չենք եղել որոշելու, թե արդյոք անհրաժեշտ կլինեին հաշվետու տարվա շահույթի ճշգրտումներ՝ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության մեջ մաշվածության ծախսի գծով: Մաշվածության գծով ծախսը 2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կազմել է 869,234 հազար դրամ, իսկ 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ 709,329 հազար դրամ:

Մենք աուդիտն իրականացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է մեր եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների միջազգային դաշնության պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ՀՄԴ-ի Վարքագիրք) և Հայաստանի Հանրապետությունում կիրառելի՝ ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ վարքագծի պահանջների, և մենք կատարել ենք վարքագծի նկատմամբ մեր մյուս պարտականությունները՝ այդ պահանջների համաձայն: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

ԱՅԼ ՀԱՆԳԱՄԱՆՔ

- Ընկերության 2023թ. տարկան ֆինանսական հաշվետվությունները աուդիտի չեն ենթարկվել:
- 2017 թվականի սեպտեմբերի 25-ից մինչև 2022 թվականի դեկտեմբերի 16-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում, Ընկերության նախկին գլխավոր հաշվապահը, հասանելիություն ունենալով ընկերության բանկային հաշիվներին, խաբեությամբ, կեղծիքի միջոցով, միանձնյա կերպով իրականացրել է դրամական միջոցների յուրացումներ, մասնավորապես՝ 254,067 հազար դրամ: Տվյալ փաստի առնչությամբ հարուցված է քրեական գործ, որն այս պահին գտնվում է ընթացքի մեջ, հետևաբար մենք ի վիճակի չենք եղել որոշելու, թե արդյոք ինչ գումարի ճշգրտումներ անհրաժեշտ կլինին յուրացված դրամական միջոցների առնչությամբ՝ սեփական կապիտալի և ֆինանսական վիճակի հաշվետվությունների մեջ:

ԴԵԿԱՎԱՐՈՒԹՅԱՆ և ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՕՂԱԿՆԵՐՈՒՄ ՆԵՐԳՐԱՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշմարիտ ներկայացման համար: Այդ նպատակով ղեկավարությունը սահմանում է անհրաժեշտ վերահսկողության համակարգ, որը թույլ է տալիս պատրաստել ֆինանսական հաշվետվություններ, որոնք ազատ են խարդախության կամ սխալի արդյունքում էական խեղաթյուրումից:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս, ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու, անընդհատ գործելուն առնչվող հարցերը բացահայտելու (եթե կիրառելի է), ինչպես նաև գործունեության անընդհատության ենթադրության վրա հիմնված հաշվառում վարելու համար, քանի դեռ ղեկավարությունը չի նախատեսում լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել դրա գործունեությունը կամ չունի իրատեսական այլընտրանք, բացի նշվածները:



ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՓԲԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmlc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

ԱՌԴԴՏԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԴԴՏԻ ՀԱՄԱՐ

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում՝ խարդախությունների կամ սխալների հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրումներից զերծ լինելու վերաբերյալ, ինչպես նաև ներկայացնել աուդիտորի եզրակացություն, որը կներառի մեր կարծիքը: Ողջամիտ հավաստիացումը բարձր աստիճանի հավաստիացում է, սակայն այն երաշխիք չի հանդիսանում, որ ԱՄՍ-ների համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումներ, երբ այդպիսիք կան: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են էական, եթե ակնկալվում է, որ դրանք առանձին-առանձին կամ միասին վերցված կարող են ազդել այս ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների՝ դրնաց հիման վրա կայացրած տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համապատասխան իրականացվող աուդիտի շրջանակներում մենք կիրառում ենք պմասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն ամբողջ աուդիտի ընթացքում: Բացի այդ, մենք.

- ✚ Բացահայտում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք այդ ռիսկերին ուղղված աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար: Խարդախության արդյունք հանդիսցող էական խեղաթյուրման չբացահայտման ռիսկն ավելի մեծ է, քան սխալի հետևանքով առաջացած խեղաթյուրման չբացահայտման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, փաստաթղթերի կեղծում, միտումնավոր բացթողումներ, կեղծ հայտարարությունների տրամադրում կամ ներքին վերահսկողության համակարգի չարաշահում:
- ✚ Պատկերացում ենք կազմում աուդիտին առնչվող ներքին վերահսկողության վերաբերյալ, որպեսզի մշակենք համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, բայց ոչ Ընկերության ներքին վերահսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- ✚ Գնահատում ենք կիրառվող հաշվապահական հաշվառման քաղաքականության պատշաճությունը, ինչպես նաև ղեկավարության կատարված հաշվապահական գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- ✚ Եզրահանգումներ ենք կատարում ղեկավարության կողմից անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և ձեռք բերված աուդիտորական ապացույցների հիման վրա հետևություն ենք անում, թե արդյոք առկա է իրադարձությունների կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած առաջացնել Ընկերության անընդհատ գործելու հնարավորության վերաբերյալ: Եթե մենք գալիս ենք եզրահանգման, որ գոյություն ունի էական անորոշություն, մենք պետք է մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե նման բացահայտումները պատշաճ կերպով ներկայացված չեն, մենք պետք է ձևափոխենք կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր աուդիտորական եզրակացության



ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՓԲԸ

Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն

Էլ. հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա իրադարձությունները կամ հանգամանքները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը կորցնի իր անընդհատ գործելու կարողությունը:

- ✦ Գնահատում ենք ընդհանուր առմամբ ֆինանսական հաշվետվությունների ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները և արդյոք ֆինանսական հաշվետվությունները ներկայացնում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու իրադարձությունները այն ձևով, որն ապահովում է ճշմարիտ ներկայացումը:

Այլ հարցերի հետ մեկտեղ, մենք հաղորդակցում ենք կառավարման օղակներում ներգրավված անձանց հետ աուդիտի պլանավորված շրջանակների և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված էական թերացումների վերաբերյալ, որոնք ներառում են աուդիտի ընթացքում մեր կողմից բացահայտված ներքին վերահսկողության կարևոր թերությունները:

Ք. Երևան, 20.06.2025թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՓԲԸ

Գլխավոր տնօրեն՝

Որակավորված աուդիտոր՝



Գոհար Մարգարյան

Արփինե Խաչատրյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Առկան Առեւտրային Եզրագծություն

Ֆինանսական Վիճակի Մասին Հաշվետվություն

2

Համադարձակ Ֆինանսական Արձույնների Մասին Հաշվետվություն

3

Սեփական Կադիսակի Փոփոխությունների Մասին Հաշվետվություն

4

Դրամական Միջոցների Հոսքերի Մասին Հաշվետվություն

5

Ֆինանսական Հաշվետվություններին Կից Ծանոթագրություններ

6

«Ջրառ» ՓԲԸ

**ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

Հազար դրամ	Ծնթ.	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	13	53,075	56,913
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	14	817,207	1,014,391
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	15	193,408	67,784
		1,063,690	1,139,088
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	16	55,384,306	47,937,365
Տրված կանխավճարներ հիմնական միջոցների ձեռքբերման գծով		4,415,078	12,163,550
		59,799,384	60,100,915
Ընդամենը ակտիվներ		60,863,074	61,240,003
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	17	106,000	116,000
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	18	40,886	32,752
		146,886	148,752
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	17	-	-
		-	-
Ընդամենը պարտավորություններ		146,886	148,752
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		49,256,335	49,256,335
Վերագնահատման պահուստ		56,338,021	56,338,021
Կուտակված շահույթ		(44,878,168)	(44,503,105)
Ընդամենը սեփական կապիտալ	19	60,716,188	61,091,251
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		60,863,074	61,240,003



«Ջրառ» ՓԲԸ

Ղեկավար _____

Գլխավոր հաշվապահ _____

Արգարյան Արտաշես Սամվելի
անուն ազգանուն

Շողյան Արտակ Շահենի
անուն ազգանուն

Այս ֆինանսական հաշվեկրթությունները հաստատվել են Ընկերության Ղեկավարության կողմից 20.06.2025թ., 6-21 էջերում ներկայացված ծանոթագործությունները հանդիսանում են սույն հաշվեկրթությունների անբաժանելի մասը:

«ԶԻՐԱՌ» ՓԲԸ

**ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

Հազար դրամ	Ծնթ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Հասույթ	5	1,114,664	1,404,405
Ինքնարժեք	6	(1,775,325)	(1,480,327)
Համախառն շահույթ/(վնաս)		(660,661)	(75,922)
Եկամուտ շնորհների գծով	7	1,586,802	1,694,943
Այլ եկամուտ	8	9,682	16,832
Իրացման ծախսեր	9	(872,754)	(1,521,588)
Վարչական ծախսեր	10	(394,768)	(345,391)
Այլ ծախսեր	11	(43,364)	(18,844)
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ		(375,063)	(249,970)
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	12	-	-
Տարվա շահույթ		(375,063)	(249,970)
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		(375,063)	(249,970)



«ԶԻՐԱՌ» ՓԲԸ

Ղեկավար _____

Գլխավոր հաշվապահ _____

Աբգարյան Արտաշես Սամվելի
անուն ազգանուն

Շիոյան Արտակ Շահենի
անուն ազգանուն

Այս ֆինանսական հաշվեկշիռային տվյալները հաստատվել են Ընկերության Ղեկավարության կողմից 20.06.2025թ., 6-21 էջերում ներկայացված ծանոթագործությունները հանդիսանում են սույն հաշվեկշիռային տվյալների անբաժանելի մասը:

«ԶԻՐԱՌ» ՓԲԸ

**ՍԵՓԱԿԱՆ ԿԱԴԻՏԱԼԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ**

Հազար դրամ	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Պահուստային կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը սեփական կապիտալ հազ. դրամ
01.01.2023թ. դրությամբ	37,092,785	56,338,021	(43,651,286)	49,779,520
Տարվա շահույթ			(249,970)	(249,970)
Կանոնադրական կապիտալի համալրում	12,163,550			12,163,550
Շահաբաժնի վճարում			-	-
Նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղում			(601,849)	(601,849)
31.12.2023թ. դրությամբ	49,256,335	56,338,021	(44,503,105)	61,091,251
Տարվա շահույթ			(375,063)	(375,063)
Կանոնադրական կապիտալի համալրում	-			-
Շահաբաժնի վճարում			-	-
Նախորդ ժամանակաշրջանի սխալների ուղղում				-
31.12.2024թ. դրությամբ	49,256,335	56,338,021	(44,878,168)	60,716,188



«ԶԻՐԱՌ» ՓԲԸ

Ղեկավար

Աբգարյան Արտաշես Սամվելի
անուն ազգանուն

Գլխավոր հաշվապահ

Շիրյան Արտակ Շահենի
անուն ազգանուն

Այս ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են Ընկերության Ղեկավարության կողմից 20.06.2025թ., 6-21 էջերում ներկայացված ծանոթագրությունները հանդիսանում են սույն հաշվետվությունների անբաժանելի մասը:

«ՋՐԱՌ» ՓԲԸ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2024թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ

Հազար դրամ	Ծնթ.	2024թ. հազ. դրամ	2023թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Վաճառքների գծով ստացված դրամական միջոցներ		1,507,684	1,885,343
Աշխատակիցներին վճարված դրամական միջոցներ		(783,024)	(637,784)
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		(1,928,553)	(2,740,568)
Պետական բյուջեից ստացված դրամական միջոցներ		47,000	-
Վճարումներ պետական բյուջե		(385,679)	(380,232)
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների այլ հոսքեր		(3,922)	(374)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր		(1,546,494)	(1,873,615)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռք բերումից ելքեր		(118,872)	(12,199,151)
Ելքեր ներդրումային այլ գործունեությունից		-	-
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր		(118,872)	(12,199,151)
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ստացված շնորհներ		1,800,990	1,909,132
Վճարված վարկեր, փոխառություններ		(10,000)	(9,000)
Վճարված տոկոսներ վարկերի, փոխառությունների գծով		-	-
Կանոնադրական կապիտալի համալրում		-	12,163,550
Ֆինանսավորման գործունեությամբ (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ		1,790,990	14,063,682
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		125,624	(9,084)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1-ը հունվարի	16	67,784	76,868
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		-	-
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	16	193,408	67,784



«Ջրառ» ՓԲԸ

Ղեկավար

Արգաթյան Արտաշես Սամվելի
անուն ազգանուն

Գլխավոր հաշվապահ

Շիոյան Արտակ Շահենի
անուն ազգանուն

Այս ֆինանսական հաշվեպնությունները հաստատվել են Ընկերության Ղեկավարության կողմից 20.06.2025թ., 6-21 էջերում ներկայացված ծանոթագործությունները հանդիսանում են սույն հաշվեպնությունների անբաժանելի մասը:

«ՋՐԱՌ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Ջրառ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ «Ընկերություն») ստեղծվել է ՀՀ Կառավարության 2006 թվականի փետրվարի 9-ի թիվ 164 որոշման համաձայն «Ոռոգում-Ջրառ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցման թիվ՝ 286.140.000377 գրանցման օրը՝ 27 հոկտեմբերի 1994թ., վկայական 01Ա 003206) առանձնացման ճանապարհով վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է դրա իրավահաջորդը՝ բաժանիչ (առանձնացման) հաշվեկշիռն համապատասխան:

Ընկերության գործունեության հիմնական տեսակը իր տիրապետմանը և օգտագործմանը տրված ջրային համակարգերի պահմանումը և շահագործումն է, ինչպես նաև պայմանագրային հիմունքներով ջրօգտագործողներին ոռոգման ջրի մատակարարումը՝ պետական սեփականություն հանդիսացող ոչ մրցակցային ջրային համակարգերի կառավարման միջոցով, որպես ոչ մրցակցային ջրամատակարար, ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով ու պայմանագրային հիմունքներով կարգավորող հանձնաժողովի սահմանված սակագներով, ոռոգման ծառայությունների ոլորտում իրականացնում է բնակչության ու տնտեսության կարիքների՝ ջրապահանջարկի ապահովման նորմավորված ջրամատակարարումը:

Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

«Ջրառ» ՓԲԸ-ն շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 49,256,335,092 ՀՀ դրամ, որը կազմում է 6,059,111 հատ հասարակ բաժնետոմս: Մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 8,129.3 ՀՀ դրամ:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան, Կենտրոն, Վարդանանց փակուղի 8

31.12.2024թ. դրությամբ Ընկերության աշխատակիցների թվաքանակը կազմել է 283 մարդ (31.12.2023թ. դրությամբ՝ 260 մարդ)

1.2 ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

• ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐ

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է միայն Հայաստանում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար: Քաղաքական և տնտեսական փոփոխությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել ղեկավարության ներկա սպասումներից: Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իրացվելիության ընթացիկ մակարդակը բավարար է կայուն գործունեության համար:

2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

(ա) Համապատասխանության մասին հայտարարություն

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (<<ՄՄՍ) կողմից մշակված և հրապարակված ֆինանսական Հաշվետվությունների Ներկայացման Միջազգային Ստանդարտների (ՖՀՆՄՍ) և ֆինանսական Հաշվետվությունների Մեկնաբանությունների Միջազգային Կոմիտեի (ՖՀՄՄԿ) կողմից թողարկված Մեկնաբանությունների համաձայն:

(բ) Չափման հիմունքները

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են իրական արժեքի սկզբունքի հիման վրա՝ ֆինանսական արդյունքներով ճշգրտվող, իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների, ինչպես նաև վաճառքի համար մատչելի ակտիվների համար, բացառությամբ այն ակտիվների, որոնց իրական արժեքը հնարավոր չէ որոշել: Ընկերությունն իր ֆինանսական հաշվետվությունները պատրաստել է հաշվեգրման հիմունքով, բացառությամբ դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության:

(գ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է (դրամ), որը հանդիսանում է Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և սույն ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը: Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով՝ հազարների ճշտությամբ:

(դ) Անընդհատություն

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են՝ հիմնվելով այն գնահատման վրա, որ Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է անընդհատության սկզբունքից ելնելով: Այս դատողությունն անելիս ղեկավարությունը հաշվի է առել Ընկերության ֆինանսական վիճակը, ընթացիկ մտադրությունները, գործառնությունների եկամտաբերությունը և ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը:

3. ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐԻ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Այս ֆինանսական հաշվետվությունները ՖՀՄՍ-ի պահանջներին համապատասխան պատրաստելու համար ղեկավարությունը կատարել է մի շարք դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև ակտիվների, պարտավորությունների, եկամտի և ծախսի ներկայացված գումարների վրա: Փաստացի արդյունքները կարող են տարբերվել այդ գնահատումներից: Գնահատումներն ու համապատասխան ենթադրությունները շարունակաբար վերանայվում են: Հաշվապահական գնահատումների վերանայումները ճանաչվում են այն ժամանակաշրջանում որում վերանայվել են և այն ապագա ժամանակաշրջաններում, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ:

Չնայած ենթադրությունները և դատողությունները հիմնված են ղեկավարության կողմից ներկա ցուցանիշների վերաբերյալ տեղեկացված լինելու վրա, այդ հաշվապահական գնահատականները, որպես կանոն, հազվադեպ են համապատասխանում իրական արդյունքներին: Հետևաբար, կատարված ենթադրությունները և դատողությունները համապատասխանաբար կճշգրտվեն այն տարում, որում պայմանները կփոխվեն:

ՆՈՐ և ՎԵՐԱՆԱՅՎԱԾ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

Ընթացիկ տարում Ընկերությունը չի կիրառել հրապարակված, սակայն դեռևս ուժի մեջ չմտած որևիցե նոր ստանդարտ, մեկնաբանություն կամ փոփոխություն սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս: Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ ստորև ներկայացված նոր կամ փոփոխված ստանդարտներն ըստ ակնկալիքների նշանակալի ազդեցություն չեն ունենա Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՍ 1-ի փոփոխություններ)
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՍ 7-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- Վարձակալության գծով պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություններ)

4. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՍՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

4.1 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցների միավորը, որը կարող է ճանաչվել որպես ակտիվ, չափվում է իր սկզբնական արժեքով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Սկզբնական արժեքի մոդել

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները, տեղանքի նախապատրաստման, տեղակայման ծախսումները, մասնագիտական վճարները:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցի՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցիչ փոխարինման ծախսումներ, կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցիչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացվում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում դրանց տեղի ունենալու ժամանակ:

Մաշվածություն

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում բացառությամբ, եթե այն ներառվել է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արդյունքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Մաշվածությունը ճանաչվում է ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը, հիմնական միջոցի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները հետևյալն են.

Հիմնական միջոցի անվանումը	Օգտակար ծառայության ժամկետը (տարի)
Շենքեր, շինություններ, կառուցվածքներ	20-50
Մեքենաներ և սարքավորումներ	5-20
Հաշվողական և համակարգչային տեխնիկա	1-8
Այլ հիմնական միջոցներ	3-20

4.2 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

- 1) հավանական է, որ ակտիվին վերագրելի ակնկալվող ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն կազմակերպություն,
- 2) ակտիվի սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել,
- 3) ակտիվը ոչ նյութական միավորի գծով կազմակերպության ներսում կատարված ծախսումների արդյունք չէ:

Չփոխանակվող գործարքների միջոցով ձեռք բերված ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը դրա իրական արժեքն է՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Եթե ոչ նյութական ակտիվը ձեռք է բերվում կազմակերպության միավորման արդյունքում, այդ ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը դրա իրական արժեքն է՝ ձեռքբերման ամսաթվի դրությամբ:

Երբ ոչ նյութական ակտիվը ձեռք է բերվել՝ փոխանակելով ոչ դրամական ակտիվի կամ ակտիվների, կամ դրամական և ոչ դրամական ակտիվների համակցության հետ, ոչ նյութական ակտիվի սկզբնական արժեքը չափվում է իրական արժեքով, բացառությամբ, երբ ոչ ստացված, և ոչ էլ տրված ակտիվի իրական արժեքը հնարավոր չէ արժանահավատորեն չափել: Ձեռք բերված ոչ նյութական ակտիվը չափվում է այս կերպ, նույնիսկ, եթե կազմակերպությունը չի կարող անմիջապես ապաճանաչել տրված ակտիվը: Եթե ձեռք բերված ոչ նյութական ակտիվը չի չափվում իրական արժեքով, դրա սկզբնական արժեքը չափվում է տրված ակտիվի հաշվեկշռային արժեքով:

Ոչ նյութական ակտիվը որպես ակտիվ ճանաչվելուց հետո չափվում է սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված ամորտիզացիան:

Բոլոր ոչ նյութական ակտիվները ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում: Ոչ նյութական ակտիվի ամորտիզացվող գումարը պարբերական հիմունքով բաշխվում է ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Ամորտիզացվող գումարը ակտիվի սկզբնական արժեքն է:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանի ամորտիզացիայի գումարը ճանաչվում է հավելուրդում կամ պակասուրդում, բացառությամբ, եթե այն ներառվում է մեկ այլ ակտիվի հաշվեկշռային արժեքում:

Ոչ նյութական ակտիվի ամորտիզացիան հաշվարկվում է գծային մեթոդով:

Ոչ նյութական ակտիվների օգտակար ծառայությունը հետևյալն է.

Դասի անվանումը	Օգտակար ծառայության ժամկետը (տարի)
Համակարգչային ծրագրեր	10

բայց ոչ ավելի ոչ նյութական ակտիվի իրավաբանորեն ամրագրված օգտագործման ժամանակահատվածից:

4.3 Պաշարներ

Պաշարների սահմանումը

Պաշարները այն ակտիվներն են, որոնք՝

- 1) հումքի կամ նյութերի ձևով են՝ արտադրության ընթացքում օգտագործելու համար.
- 2) արտահայտված են հումքի կամ նյութերի ձևով՝ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու կամ բաշխելու համար.
- 3) պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի կամ բաշխման համար, կամ
- 4) արտադրության ընթացքում են՝ վաճառքի կամ բաշխման համար:

Պաշարների ճանաչումը

Պաշարը ճանաչվում է որպես ակտիվ, երբ՝

- 1) հավանական է, որ դրա հետ կապված ապագա տնտեսական օգուտները կամ օգտակար պոտենցիալը կհոսեն դեպի կազմակերպություն, և
- 2) դրա սկզբնական արժեքը կամ իրական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Այն պաշարները, որոնց օգտագործումից կազմակերպությունը տնտեսական օգուտների կամ օգտակար պոտենցիալի ներհուսք չի ակնկալում, չեն ճանաչվում:

Պաշարները սկզբնապես չափվում են իրենց սկզբնական արժեքով (ինքնարժեքով):

Եթե պաշարները ձեռք են բերվել չփոխանակվող գործարքով, դրանց սկզբնական արժեքը (ինքնարժեքը) չափվում է այդ պաշարների ձեռքբերման ամսաթվի դրությամբ իրական արժեքով:

Պաշարների սկզբնական արժեքը (ինքնարժեքը) ներառում է՝

- 1) պաշարների ձեռքբերման ծախսումները.
- 2) պաշարների վերամշակման ծախսումները, և
- 3) պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Պաշարների հաշվառման բանաձևերը

Փոխադարձ փոխարկելի չհանդիսացող պաշարների, ինչպես նաև հատուկ ծրագրերի համար նախատեսված և արտադրված ապրանքների կամ ծառայությունների միավորի սկզբնական արժեքը (ինքնարժեքը) որոշվում է դրանց կոնկրետ ծախսումների հստակ առանձնացման միջոցով:

Փոխադարձ փոխարկելի հանդիսացող պաշարների արժեքը որոշվում է «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևով:

4.4 Պահուստներ

Պահուստի սահմանումը

Պահուստը անորոշ ժամկետով կամ գումարով պարտավորություն է:

Պարտավորությունը կազմակերպության ներկա պարտականությունն է՝ որպես կատարված (անցյալ) դեպքերի արդյունք, որի մարումն ակնկալվում է, որ կհանգեցնի կազմակերպությունից տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսքի:

Պահուստի ճանաչումը

Պահուստ ճանաչվում է, երբ՝

- 1) կազմակերպությունն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք,
- 2) հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ կամ օգտակար պոտենցիալ մարմնավորող միջոցների արտահոսք, և
- 3) պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն չափել:

4.5 Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ լրանում են ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները, կամ այն ժամանակ, երբ ֆինանսական ակտիվները բոլոր նշանակալից ռիսկերով ու հատուցումներով փոխանցվում են երրորդ կողմին:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, վճարման ենթակա չեն, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները՝ բացառությամբ այն ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների, որոնք սկզբնապես դասակարգվում են որպես ֆինանսական ակտիվներ և ֆինանսական պարտավորություններ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, որոնք սկզբնապես չափվում են իրական արժեքով:

Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետագա չափումը ներկայացված է ստորև:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները, բացառությամբ հեջավորման գործիքների, դասակարգվում են՝

- Փոխառություններ և դեբիտորական պարտքեր,
- Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական աշխարհով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- Մինչև մարման ժամկետը պահվող ներդրումներ:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանում է

այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և որը ցույց է տալիս, թե իրական արժեքի փոփոխության արդյունքում ստացվող օգուտներն ու վնասները պետք է ճանաչվեն համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, թե ուղղակիորեն սեփական կապիտալում:

Ընդհանուր առմամբ, Ընկերության բոլոր ֆինանսական ակտիվները ճանաչվում են՝ օգտագործելով վերջնահաշվարկի ամսաթվի հաշվառումը: Ֆինանսական ակտիվի արժեզրկման գնահատումն իրականացվում է առնվազն յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները ճանաչվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ համապատասխանաբար «Ֆինանսական ծախս» և «Ֆինանսական եկամուտ» կամ «Այլ Ֆինանսական արդյունքներ» հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է «Այլ ծախսեր» հոդվածում:

Փոխառություններ և դեբիտորական պարտքեր

Փոխառություններն ու դեբիտորական պարտքերը ֆիքսված կամ որոշելի վճարումներով ոչ ածանցյալ ֆինանսական ակտիվներ են, որոնք չեն գնանշվում ակտիվ շուկայում և ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքերը, ինչպես նաև մնացորդները դրամարկղում և բանկերում:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը:

Ֆինանսական պարտավորություններ

Վարկեր և փոխառություններ

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այդ արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4.6 Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհների հիմնական պայմանն այն է, որ դրանց ստացման իրավունք ունեցող կազմակերպությունը պետք է գնի, կառուցի կամ որևէ այլ կերպ ձեռք բերի երկարաժամկետ ակտիվներ:

Եկամուտներին վերավերող շնորհները ակտիվներին վերաբերող շնորհներից տարբերվող շնորհներ են:

Շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում պարբերաբար այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Ընկերությունը որպես ծախս է ճանաչում դրանց համապատասխան ծախսումները, որոնց փոխհատուցման համար նախատեսված են շնորհները: Որոշակի ծախսերի համար տրված շնորհները ճանաչվում են շահույթում կամ վնասում նույն ժամանակաշրջանում, որում ճանաչվում են այդ համապատասխան ծախսերը: Նմանապես, մաշվող (ամորտիզացվող) ակտիվներին վերաբերող շնորհները սովորաբար ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանների ընթացքում և այն համամասնություններով, որոնք համապատասխանում են այդ ակտիվների մաշվածության ծախսերի

ճանաչմանը: Շնորհիւ, որը ստացման ենթակա է դառնում ի հատուցում արդեն կրած ծախսերի կամ վնասների, կամ որի նպատակն է կազմակերպությանը տրամադրել անհետաձգելի ֆինանսական օգնություն՝ առանց դրա հետ կապված հետագա ծախսումների, պետք է ճանաչվի շահույթում կամ վնասում այն հաշվետու ժամանակաշրջանում, երբ այն դառնում է ստացման ենթակա:

Ակտիվներին վերաբերող շնորհները, ներառյալ իրական արժեքով հաշվառվող ոչ դրամային շնորհները, ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես նվազեցում ակտիվի հաշվեկշռային արժեքը որոշելիս: Այսինքն շնորհը նվազեցվում է ակտիվի հաշվեկշռային արժեքը հաշվարկելիս և արտացոլվում է շահույթում կամ վնասում մաշվող (ամորտիզացվող) ակտիվի օգտակար ծառայության ընթացքում՝ նվազեցված մաշվածության ծախսի ձևով:

4.7 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Հետաձգված հարկը հաշվարկվում է ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և շահութահարկի հաշվարկման ժամանակ օգտագործվող համապատասխան հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերություններից: Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար:

Կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը կիրառվել է հետևողականորեն սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների նկատմամբ:

5. ՀԱՍՈՒՅԹ

Ընկերության հասույթը ամբողջությամբ ձևավորվել է պետական սեփականություն հանդիսացող ոչ մրցակցային ջրային համակարգերի կառավարման միջոցով, պայմանագրային հիմունքներով կարգավորվող հանձնաժողովի սահմանված սակագներով ոռոգման ծառայությունների որլորտում բնակչության և տնտեսության կարիքների՝ ջրապահանջարկի ապահովման նորմավորված ջրամատակարարման ծառայություններից:

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Հասույթ ոռոգման նպատակով ջրամատակարարման ծառայություններից	1,114,664	1,404,405
Ընդամենը	1,114,664	1,404,405

Ստորև ներկայացված աղյուսակում ջրօգտագործողների հետ պայմանագրերից հասույթը ներկայացված է ըստ հիմնական աշխարհագրական շրջանների և հասույթ ճանաչման ժամանակաշրջանների՝

Ջրամատակարարման ծառայությունների հիմնական աշխարհագրական շրջաններ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Արմավիր	619,129	683,409
Արարատ	284,861	505,303
Արագածոտն	81,526	79,533
Կոտայք	58,232	61,062
Երևան	42,155	48,886
Շիրակ	27,211	24,596
Սյունիք	850	916
Վայոց Ձոր	700	700
Ընդամենը	1,114,664	1,404,405

Ընկերությունը ճանաչում է հասույթը, երբ ջրօգտագործողին է փոխանցում ծառայության նկատմամբ հսկողությունը: Հասույթը չափվում է ջրօգտագործողների հետ պայմանագրերում սահմանված հատուցման համապատասխան դուրս գրված հաշիվների հիման վրա:

6. ԻՆՔՆԱՐԺԵՔ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Հատուցումներ աշխատակիցներին	757,372	636,323
Մաշվածություն և ամորտիզացիա	841,506	683,294
Մաքրման աշխատանքներ	106,110	101,952
Նյութեր	69,737	57,358
Այլ	600	1,400
Ընդամենը	1,775,325	1,480,327

7. ԵԿԱՄՈՒՏ ԵՆՈՐՀՆԵՐԻՑ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Եկամուտ շնորհների գծով	1,586,802	1,694,943
Ընդամենը	1,586,802	1,694,943

8. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Եկամուտ գործառնական վարձակալության գծով	8,298	13,509
Այլ	1,384	3,323
Ընդամենը	9,682	16,832

9. ԻՐԱՑՄԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Էլեկտրաէներգիա	872,754	1,521,588
Ընդամենը	872,754	1,521,588

10. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Հատուցումներ աշխատակիցներին	254,158	188,664
Մաշվածություն և ամորտիզացիա	32,837	31,428
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	4,506	4,425
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	9,737	9,482
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	1,444	1,509
Մասնագիտական ծառայության վճարներ	10,178	3,185
Բանկային ծառայության և ապահովագրական ծախսեր	10	13
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	3,574	4,160
Նյութեր	45,624	69,240
Հիմնական միջոցների սպասարկման և նորոգման ծախսեր	24,066	21,610
Վարձակալության ծախսեր	5,404	6,281
Այլ	3,230	5,394
Ընդամենը	394,768	345,391

11. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ

Հազար դրամ	2024թ.	2023թ.
Հետազոտական և նախագծային ծախսեր	42,194	17,268
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	-	146
Այլ ծախսեր	1,170	1,430
Ընդամենը	43,364	18,844

12. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻԳԾՈՎ (ԾԱԽՍ)/ԵԿԱՄՈՒՏ

Հազար դրամ		2024թ. Արդյունավետ հարկային դրույքաչափ %		2023թ. Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Շահույթ (վնաս) հարկումից առաջ	(375,063)		(249,970)	
Շահութահարկ	(67,511)	18%	(44,995)	18%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)՝ զուտ	67,511	-18%	44,995	-18%
Ընդամենը հարկային ծախս (փոխհատուցում)	-	0%	-	0%

13. ՊԱՇԱՐՆԵՐ

	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
Նյութեր	27,377	26,483
Վառելիք	1,237	2,612
Պահեստամասեր	12,649	16,248
Շինանյութ	3,223	2,086
Արագամաշ առարկաներ	8,376	9,297
Ապրանքներ	213	187
Ընդամենը	53,075	56,913

14. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	718,647	877,632
Կասկածելի դեբիտորական պարտքերի գծով պահուստ	(2,270)	(2,270)
Առևտրային դեբիտորական պարտքեր, զուտ	716,377	875,362
Տրված կանխավճարներ մատակարարների գծով	18,164	11,297
Տրված կանխավճարներ աշխատակիցներին	23,368	23,050
Տրամադրված փոխառություններ	51,657	51,657
Զուտ կանխավճար	93,189	86,004
Պետական բյուջեի գծով դեբիտորական պարտքեր		
ԱԱՀ	7,641	53,023
Այլ	-	2
Բյուջեի գծով դեբիտորական պարտքեր, զուտ	7,641	53,025
Ընդամենը	817,207	1,014,391

15. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ

	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
Դրամական միջոցներ դրամարկղերում	7	7
Ընթացիկ հաշիվներ բանկերում	193,401	67,777
Ընդամենը դրամական միջոցներ	193,408	67,784

16. ՀԻՄՆԱԿԱՆՄԻՋՈՑՆԵՐ

	Շենքեր	Կառուցվածքներ	Մեքենաներ, սարքավորումներ, փոխանցող հարմարանքներ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրատնտեսական գույք	Այլ	Օգտագործման համար ոչ մատչելի շենքեր և շինություններ	Կառուցման ընթացքում գտնվող հիմնական միջոցներ	Ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք										
Մնացորդն առ 01.01.2023թ.	3,710,267	55,642,756	657,527	171,798	27,045	1,176	19,099,861	130,058	-	79,440,488
Ավելացումներ	5,019	549,644	21,322	256	1,426	5,447	-	554,208	940	1,138,262
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-	(554,182)	-	(554,182)
Մնացորդն առ 31.12.2023թ.	3,715,286	56,192,400	678,849	172,054	28,471	6,623	19,099,861	130,084	940	80,024,568
Ավելացումներ	7,298	8,194,799	32,622	43,040	916	-	37,500	250,871	-	8,567,046
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-	(250,871)	-	(250,871)
Մնացորդն առ 31.12.2024թ.	3,722,584	64,387,199	711,471	215,094	29,387	6,623	19,137,361	130,084	940	88,340,743
Կուտակված մաշվածություն										
Մնացորդն առ 01.01.2023թ.	(945,697)	(29,097,423)	(572,752)	(119,510)	(25,672)	(193)	(616,627)	-	-	(31,377,874)
Տարվա ծախս	(153,053)	(531,371)	(10,320)	(13,565)	(486)	(527)	-		(7)	(709,329)
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-		-	-
Մնացորդն առ 31.12.2023թ.	(1,098,750)	(29,628,794)	(583,072)	(133,075)	(26,158)	(720)	(616,627)	-	(7)	(32,087,203)
Տարվա ծախս	(139,672)	(649,997)	(51,024)	(26,293)	(831)	(1,323)	-		(94)	(869,234)
Ներքին շարժ	-	-	-	-	-	-	-		-	-
Մնացորդն առ 31.12.2024թ.	(1,238,422)	(30,278,791)	(634,096)	(159,368)	(26,989)	(2,043)	(616,627)	-	(101)	(32,956,437)
Զուտ հաշվեկշռային արժեք										
Մնացորդն առ 01.01.2023թ.	2,764,570	26,545,333	84,775	52,288	1,373	983	18,483,234	130,058	-	48,062,614
Մնացորդն առ 31.12.2023թ.	2,616,536	26,563,606	95,777	38,979	2,313	5,903	18,483,234	130,084	933	47,937,365
Մնացորդն առ 31.12.2024թ.	2,484,162	34,108,408	77,375	55,726	2,398	4,580	18,520,734	130,084	839	55,384,306

Հիմնական միջոցների ձեռքբերման գծով տրված կանխավճարներն իրենից ներկայացնում է 2023թ. ՀՀ-ից որպես կանոնադրական կապիտալի համալրում ստացված և 28.12.2023թ. -ին ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտե փոխանցված 12,163,550 հազար դրամ դրամական միջոցների մնացորդը: Վեդի ջրամբարի փոխանցման գործարքի շրջանակներում 28.02.2024թ. -ին հանձնման-ընդունման ակտով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամից ստացվել են թվով 48 մակարդակաչափեր, Վեդի ջրամբարի ոռոգման համակարգի մայր ջրատարը՝ ներառյալ 2 փականային կառավարման հանգույցները, Վեդի ջրամբարի ջրառ հանգույցներ և փոխադրման համակարգը, ընդամենը՝ 7,748,472 հազար դրամ արժեքով: Արդյունքում փոխանցված կանխավճարի գծով մնացորդը հաշվետու ժամանակաշրջանի վերջում կազմել է 4,415,078 հազար դրամ:

17. ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

	Ընթացիկ		Ոչ ընթացիկ	
	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
Ապահովված բանկային վարկեր	-	-	-	-
Կապակցված կողմերից չապահովված փոխառություններ	106,000	116,000	-	-
Ընդամենը	106,000	116,000	-	-

Կապակցված կողմերից չապահովված փոխառություններն իրենցից ներկայացնում են «Հայջրմուկոյուղի» ՓԲ ընկերության կողմից տրամադրված անտոկոս փոխառությունը

18. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵՔԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ

	31.12.2024թ. հազ. դրամ	31.12.2023թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	9,682	8,547
Հաճախորդներից կանխավճարներ	376	386
Պետական բյուջեին կրեդիտորական պարտքեր	27,475	19,916
Հատուցումներ աշխատակիցներին	3,353	3,903
	40,886	32,752

19. ԿԱՊԻՏԱԼ և ՊԱՀՈՒՍՆԵՐ

(ա) ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ

Հազար դրամ	31.12.2024թ	29.02.2024թ
Բաժնետիրական կապիտալ	49,256,335	49,256,335
Ընդամենը	49,256,335	49,256,335

Ընկերությունն ունի հասարակ բաժնետոմսերի մեկ դաս:

Ընկերության կանոնադրական կապիտալը լրիվ վճարված է, դրա բաժնեմասը՝ 100 % պատկանում է Հայաստանի Հանրապետությանը:

Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 49,256,335,092 (քառասունինը միլիարդ երկու հարյուր հիսունվեց միլիոն երեք հարյուր երեսունհինգ հազար ինսուններկու) ՀՀ դրամ՝ 8,129.3 դրամ անվանական արժեքով 6,059,111 հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս: Բոլոր բաժնետոմսարը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Հայաստանի Հանրապետությանը:

(բ) ՇԱՀԱՔԱԺԻՆՆԵՐ

Սովորական բաժնետոմսերի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները և քվեարկել Ընկերության բաժնետերերի ժողովներում՝ մեկ բաժնետոմս – մեկ ձայն սկզբունքով: Հաշվետու տարում շահաբաժին չի վճարվել:

(գ) ՊԱՀՈՒՍՆԵՐ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված ֆինանսական հաշվետվություններում արտացոլված չբաշխված շահույթի մնացորդով:

(դ) ՎԵՐԱԳՆԱՀԱՏՄԱՆ ՊԱՀՈՒՍՆ

Վերագնահատման պահուստը վերաբերում է հիմնական միջոցների վերագնահատմանը:

20. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ և ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

(ա) Ամփոփ ներկայացում

Ֆինանսական գործիքներն օգտագործելիս Ընկերությունը ենթարկվում է հետևյալ ռիսկերին.

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Սույն ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն վերը նշված յուրաքանչյուր ռիսկին Ընկերության ենթարկվածության մասին, ինչպես նաև ռիսկերի չափման և կառավարման հետ կապված Ընկերության նպատակները, քաղաքականությունը և գործընթացները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված են վերը նշված ռիսկերին վերաբերող թվային բացահայտումներ:

Ռիսկերի կառավարման հիմունքներ

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար: Ղեկավարությունը կանոնավոր կերպով հաշվետվություններ է ներկայացնում բաժնետիրոջը իր գործունեության վերաբերյալ:

Ընկերության ռիսկերի կառավարման քաղաքականության նպատակն է բացահայտել և վերլուծել այն ռիսկերը, որոնց ենթարկվում է Ընկերությունը, սահմանել ռիսկերի համապատասխան սահմանաչափեր և վերահսկման մեխանիզմներ, ինչպես նաև վերահսկել ռիսկերի մակարդակները և դրանց համապատասխանությունը որոշված սահմանաչափերին: Ռիսկերի կառավարման քաղաքականությունը և համակարգերը կանոնավոր կերպով վերանայվում են՝ շուկայական պայմանների ու Ընկերության գործունեության փոփոխություններն արտացոլելու նպատակով:

(բ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնաս կրելու ռիսկն է, երբ ֆինանսական գործիքի պայմանագրային կողմն ի վիճակի չի լինում կատարել իր պայմանագրային պարտականությունները Ընկերության նկատմամբ: Ընկերությունը ցուցաբերում է առանձնահատուկ մոտեցում պայմանագրային յուրաքանչյուր կողմի նկատմամբ: Պարտքային ռիսկն առաջանում է հիմնականում գործընկերներից ստացվելիք դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերից ստացված փոխառությունների գծով:

Ընկերությունը չի պահանջում գրավ ֆինանսական ակտիվների գծով: Վարկային գնահատումներն իրականացվում են որոշակի սահմանաչափը գերազանցող գումարներ պահանջող հաճախորդների համար՝ բացառությամբ կապակցված կողմերի:

(գ) Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Վարկային ռիսկին Ընկերության ենթարկվածությունը հիմնականում կախված է յուրաքանչյուր գործընկերոջ առանձնահատկություններից: Այնուամենայնիվ, ղեկավարությունը դիտարկում է նաև գործընկերների բազայի կառուցվածքը, ներառյալ տվյալով որտի հաճախորդի ու երկրի կողմից հանձն առնված պարտականության չկատարման ռիսկը, քանի որ այս գործոնները կարող են ազդեցություն ունենալ վարկային ռիսկի վրա:

Ընկերությունն ըստ անհրաժեշտության կձևավորի արժեզրկման գծով պահուստ, որն իրենից ներկայացնում է առևտրական և այլ դեբիտորական պարտքերի գծով կրած վնասների Ընկերության գնահատականը: Այս պահուստը վերաբերում է անհատական հիմունքով ռիսկի զգալի գործոն պարունակող պարտքերին, որոնք արժեզրկված են:

(դ) Գործարքներ փոխկապակցված կողմերի հետ

Համաձայն «Փոխկապակցված կողմերի բացահայտում» ՀՀՄՍ 24-ի, կողմերը համարվում են փոխկապակցված, եթե մի կողմը հնարավորություն ունի վերահսկել մյուս կողմին կամ էական ազդեցություն ունենալ մյուս կողմի ֆինանսական և գործառնական որոշումների կայացման վրա: Սույն ֆինանսական հաշվետվությունների տեսանկյունից, փոխկապակցված կողմերը ներառում են Ընկերության ղեկավարության անդամներին և նրանց հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև այլ անձանց և կազմակերպություններին, որոնք փոխկապակցված են կամ համապատասխանորեն վերահսկվում են նրանց կողմից:

Հաշվետու տարվա ընթացքում Ընկերությունի ղեկավար անձնակազմի հետ կատարվել է 14,587 հազար, իսկ 2023թ. ընթացքում 10,467 հազար դրամի գործարք /վճարվել է աշխատավարձ/ :

(զ) Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկը ենթադրում է, որ Ընկերությունը կունենա դժվարություններ՝ իր ֆինանսական պարտավորությունների հետ կապված պարտականությունները կատարելիս, որոնց մարումը պահանջում է դրամական միջոցների կամ մեկ այլ ֆինանսական ակտիվի տրամադրում: Իրացվելիության ռիսկի կառավարման հարցում Ընկերության մոտեցումն է ապահովել բավարար իրացվելիություն՝ բնականոն և արտակարգ իրավիճակներում պարտավորությունները կատարելու համար՝ առանց անընդունելի կորուստներ կրելու կամ Ընկերության համբավը վտանգելու: Ընկերությունը ապահովում է ցպահանջ դրամական միջոցների այնպիսի չափի առկայություն, որը բավարար կլինի ակնկալվող գործառնական ծախսերը ծածկելու համար՝ ներառյալ ֆինանսական պարտականությունների սպասարկման ծախսերը: Այս պարագայում հաշվի չի առնվում առանձնահատուկ հանգամանքների հնարավոր ազդեցությունը, որոնք հնարավոր չէ կանխատեսել, օրինակ՝ բնական աղետները:

(է) Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը Ընկերության եկամտի կամ նրա ֆինանսական գործիքների արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների, այդ թվում արտարժույթի փոխարժեքի դրույքների, տոկոսադրույքների և բաժնետոմսերի գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկի կառավարման նպատակը ռիսկի այնպիսի կառավարումն ու վերահսկումն է, որը թույլ կտա պահպանել այս ռիսկին ենթարկվածության աստիճանն ընդունելի սահմաններում՝ միաժամանակ ապահովելով ռիսկի դիմաց եկամտաբերության օպտիմալացումը:

(ը) Արտարժույթի ռիսկ

Արտարժույթի ռիսկի նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը կապված է ֆունկցիոնալ արժույթից տարբեր այլ արժույթով արտահայտված վաճառքների, ձեռքբերումների և փոխառությունների հետ:

(թ) Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում վարկերի և փոխառությունների վրա՝ փոխելով կամ դրանց իրական արժեքը (ֆիքսվածդրույքով պարտք) կամ դրամական միջոցների ապագա հոսքերը (փոփոխական դրույքով պարտք): Ընկերությունը հաշվետու տարում չունի ստացված վարկեր և փոխառություններ: Այնուամենայնիվ, փոխառություններ և վարկեր վերցնելիս ղեկավարությունը կկիրառի իքսված կամ փոփոխական դրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածության չափը որոշող քաղաքականություն կիմնվի իր դատողությունների վրա՝ մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում ֆիքսված կամ փոփոխական դրույքներ կիրառելու նպատակահարմարության վերաբերյալ որոշում կայացնելը:

21. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ

(ա) ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունը բավարարում է ՀՀ կառավարության պահանջներին՝ կապված շրջակա միջավայրի հետ և չունի պարտավորություններ կապված շրջակա միջավայրի հետ:

(բ) ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Ընկերությունն ամբողջությամբ վերահսկվում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության կողմից:

(գ) ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրությունը հաճախակի ենթարկվում է փոփոխությունների, ինչը որոշ դեպքերում մեկնաբանությունների կարիք է առաջացնում: Հաճախ տարբեր հարկային և իրավասու մարմիններ տարբեր մեկնաբանություններ ունեն: Հարկերը հարկային մարմինների կողմից ենթակա են վերանայման և ուսումնասիրության: Հարկային մարմիններն օրենքով լիազորված են տուգանքներ և տույժեր առաջադրել:

Վերոհիշյալ հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել ավելի մեծ հարկային ռիսկեր, քան այլ երկրներում: Ղեկավարությունը համոզված է, որ հարկային պարտավորությունների գծով կատարել է համապատասխան հատկացումներ հարկային օրենսդրության իրենց մեկնաբանության հիման վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել, և դրանց ազդեցությունը կարող է զգալի լինել:

22. ՀԱՇՎԵՏՈՒ ԱՄՍԱԹՎԻՑ ՀԵՏՈՒ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐ

Հաշվետու ամսաթվից հետո որևէ դեպք կամ գործարք տեղի չի ունեցել, որը կարող է նշանակալի լինել Ընկերության ֆինանսական վիճակի կամ ֆինանսական արդյունքի համար:



«Ջրառ» ՓԲԸ

Ղեկավար _____

Գլխավոր հաշվապահ _____

Աբգարյան Արտաշես Սամվելի
անուն ազգանուն

Շիրյան Արտակ Շահենի
անուն ազգանուն